

Բայց այս բոլոր խօսակցութիւնները դադրեցան, երբ Վահրիճ եկաւ գիրենք կերակուրի հրաւիրելու:

Ան գիշերը հանգչեցան, երկրորդ օրը ելան այդ փոքրիկ եւ գեղեցիկ գաւառը շրջագայելու, տեսնելու մանր առուններն ու վտակները, որ երբեմն սիրուն բլրակն երէ կ'իջնեն, երբեմն ահաւոր լեռանց պատառուածներէ եւ կ'երթան մորթումի գետը թափելու. տեղ-տեղ թուփեր եւ մայրեաց անտառներ, տեղ-տեղ խոտաւետ ձորակներ, որ շարունակ կը փոխուին: Յետոյ ահագին ապամաժներ ոմանք կամար-կամար ձեւացեալ, ոմանք անճոռնի սեպացեալ մէկ կողմն, եւ միւսն ծառերու, պարտեզներու եւ մարգագետիններու կանաչութիւն սոսկում եւ զուարճութիւն աչաց կը պատճառէին: Վերջապէս կը հասնէին կը տեսնէին գետը, որ գեղեցիկ լիճ մը կը ձեւանար՝ եւ այդ լիճը որ դարձեալ ի գետ կը փոխարկեր եւ կը դիմէր կը թափէր քարափանց վրայն ահագին բարձրութենէ սոսկալի շառաչմամբ փրփուր եւ ցնցուղ, եւ փոշի դառնալով: Ճիշտ այդ գեղեցիկ եւ միանգամայն ահաւոր տեսարանին մօտ գեղեցիկ ամառանոց մը կար միայրկ, որ Աստղկան տաճար կը նմաներ, եւ որու դռան առջեւ կանգնած էր Վահրիճ քանի մը սպասաւորներով:

Այն օրերէն մինչեւ այսօր հազար եւ անելի տարիներ անցան. գետը, լիճը, ջրվեժը, փրփուրը, ցնցուղը ամէն էլ անփոփոխ մնացած են եւ այսօր. ուղեւորը հեռու աշխարհներէ կ'երթայ, կը տեսնէ, կը հիանայ. բայց այդ տաճարանման ամառանոցը ո՞ր է, հետքը անգամ չէ մնացեր. ո՞ր են գաւառին հայ բնակիչք, իրենց եկեղեցեաց աներակներ մնացեր են՝ իրենք անհետ բոլորովին. «Ազգ գա, եւ ազգ երթա, եւ աշխարհ յաւիտեան կայ»:

Մեծ էր ուրախութիւնը շրջակայ գիւղերու բնակչաց, երբ Գուրգէնը տեսան հասած, եւ բազմութիւն ժողովրդեան գիւղապետներ եւ քահանայներ առջեւէն բարով եկարի կ'ուգային, եւ նա կը ջանար զուարթ երես ցցնել այս պատուական գիւղացուոց, երբ իր սիրտը դառնութեամբ լի էր, վասնզի ինք կը յիշէր օրերը, որ ինչպիսի